ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 15 » օգոստոսի 2023թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (11.08.2023թ.)՝ ժամը 12:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 14.08.2023թ.՝ ժամը 12:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված է ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
1	Տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար	4910400

3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից, հիմնավորումներ ներկայացնելու մասին

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքների մասին

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքներն են.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	4910400	6000000	20%	7200000	4092000	20%	4910400	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 14.08.2023թ.՝ ժամը 12:30-ին և ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ նաև հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման) մասին

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ,
- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթում նշված է, որ լիազորագիրը տրվել է. «...էլեկտրոնային ստորագրությամբ մրցույթների փաստաթղթերի ստորագրման համար», այն դեպքում, երբ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

Նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. օգոստոսի 17-ին, ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/31» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **օգոստոսի 16-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Աիդա Հովհաննիսյան